«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Հաստիքի անվանումը՝ ՄՌ Հաշվապահ

Աշխատանքային պայմանները՝ անորոշ ժամկետով (3 ամիս փորձաշրջան)

Աշխատավայրը՝ Զվարթնոց օդանավակայան

Սոցիալական երաշխիքներ՝ անվճար ծառայողական տրանսպորտ, բժշկական ապահովագրություն, այդ թվում՝ ընտանիքի անդամների

Աշխատանքի նկարագիրը՝ կատարել հաշվարկներ, ապահովել վճարումների գործընթացը:

Հիմնական գործառույթները և պարտականությունները

- Կատարել աշխատավարձերի և այլ հավասարեցված վճարումների հաշվարկները,
- Ստուգել ծառայությունների կողմից ստացված անաշխատունակության թերթիկները, արձակուրդային դիմումները, հաշվարկել և պատրաստել վճարման,
- Հետևել դատական որոշումների ընթացքին և իրականացնել որոշման պահանջները,
- Կատարել մարդկային ռեսուրսների բաժնի գործունեության և դրա արդյունքների վերլուծություն, կազմել հաշվետվություններ և ներկայացնել ղեկավարությանը,
- Ապահովել ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից սահմանված գործառույթների իրականացում (եկամտային հարկի հաշվետվությունների կազմում, տվյալների բազայի թարմացում և այլ անհրաժեշտ գործառույթներ),
- Վարել խմբի փաստաթղթաշրջանառությունը:

Ներկայացվող պահանջները.

- բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում,
- ՀՇ-ի (ցանկալի է Կադրեր և աշխատավարձ) գերազանց իմացություն,
- MS Excel ծրագրի գերազանց իմացություն
- աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում,
- անգլերենի և ռուսերենի իմացություն,
- լարված պայմաններում աշխատելու ունակություն:

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են վերոնշյալ հաստիքի պահանջներին, կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hrselection@aia-zvartnots.aero էլ. հասցեին՝ “subject” դաշտում պարտադիր նշելով **«ՄՌ Հաշվապահ»** :